# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 փետրվարի 2025 թվականի № 52-Ա**

## ՍՈՒՍԱՆՆԱ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 118-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հացավանի Հ. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2025 թվականի փետրվարի 10-ի № 4 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Հացավանի Հ. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Սուսաննա Սահակյանի*** ժամանակավոր անաշխատունակության պատճառով՝ կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հայոց լեզվի ուսուցիչ ***Մեղա Մեղրակյանի*** վրա, մինչև տնօրենի աշխատանքի ներկայանալը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և տարածվում է *2025 թվականի փետրվարի 10-ից* ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

**2025 թվականի փետրվարի 11**
**ք. Հրազդան**